

1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն

Հանրապետությունում 2005թ. հունվար-մայիսին, համաձայն ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, իրականացվել է 335.5 մլն. դրամի ձկան որս, որը զիջել է 2004թ. նույն ժամանակաշրջանի նակարդակը 33.7%-ով (համադրելի գներով):

Ձկնորսության և ձկնաբուծության արդյունքները հանրապետությունում¹

	Տոննա		Հազար դրամ		2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, %
	2005թ. հունվար-մայիս	2004թ. հունվար-մայիս	2005թ. հունվար-մայիս	2004թ. հունվար-մայիս	
Կատարվել է որս ընդամենը (ձկնորսության, ձկնաբուծության ուղորտում)	293.3	442.4	335485.3	506090.5	66.3
<i>որից՝</i> իրացվել է ընդամենը	293.3	442.4	335485.3	506090.5	66.3

¹ Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատմամբ: